



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«21» 05 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000038

Ձեռնարկողը՝

«Մեծն Հովնան» ՍՊԸ
Արարափի մարզ, գ. Մխչյան

Գործունեությունը՝

Արաքսավանի ավազի և կոպճի Մեծն Հովնան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեփութություն
Արարափի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿի տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0000 38

« 21 » 05 2019թ.

Արաքսավանի ավազի և կոպճի հանքավայրի Մեծն Հովնան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝	<<Մեծն Հովնան>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, Արաքսավան համայնք

Արաքսավանի ավազակոպճի հանքավայրի Մեծն Հովնան տեղամասը վարչական առումով գտնվում է Արարատի մարզի Արաքսավան համայնքում, գյուղից 2կմ հարավ-արևմուտք, Արաքս գետի ձախ բազուկներից մեկի՝ անանուն վտակի ձախ ափին՝ Հրազդան գետը թափվելու վայրից 0.5կմ հեռավորության վրա, իսկ Արաքսից հեռավորությունը կազմում է նվազագույնը 300մ:

Արաքսավանի հանքավայրի Մեծն Հովնան տեղամասը գենետիկորեն կապված է Արաքս գետի վտակի ժամանակակից ողողահունային նստվածքների հետ և հանդիսանում է գետաողողատային տիպի հանքավայր:

Արարատի մարզի Արաքսավանի ավազի և կոպճի հանքավայրի Մեծն Հովնան ավազի տեղամասի հաշվեկշռային պաշարները 2005 թ-ին ապրիլի 5-ի դրությամբ, ստատիկ վիճակում, հաստատվել են բնապահպանության նախարարության աշխատակազմի օգտակար հանածոների պաշարների գործակալության 28.06.2005 թիվ 71 որոշմամբ ըստ Ը կարգի 26,6 հազ.խմ քանակով: Հանքավայրը շահագործվում է 2006 թվականից:

Հաստատված պաշարները դասվել է վերականգնվողների շարքին՝ միավոր վերականգման գործակցով, 26,6հազ.խմ/տարի ընդհանուր և 13,0հազ.խմ/հա տարի տեսակարար քանակներով:



Արաքսավանի ավազի և կոպճի խառնուրդը օգտագործվելու է շինարարության համար ԳՈՍՍ 8736-95-ով խիճ և կոպիճ, ինչպես նաև ՀՍՍ ԳՈՍՍ 8736-95-ով ավազ ստանալու նպատակով: Բացահանքի մշակման ժամանակահատվածը – 24տարի:

Նախագծվող բացահանքի եզրագծում ներփակված հաշվեկշռային մարվող պաշարների ծավալը կազմում է 26000մ³ ավազակոպճագլաքարային խառնուրդ: Հանքի տարեկան արտադրողականությունը կազմում է 26000մ³:

Հանքավայրի բարենպաստ լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները և օգտակար հանածոյի փոքր հզորությունը հնարավորություն են տալիս ընդունել մշակման բաց եղանակ:

Հանքավայրի տարածքում մակաբացման ապարները բացակայում են:

Նախագծային կորուստները դրանք բնամասերի տեսքով մնում են բացահանքի կողերում, հատակում և կազմում են 2,26%, շահագործողական կորուստներ չկան:

Բացահանքում նախատեսվում է հանքարդյունահանման աշխատանքները կատարել աշխատանքների սեզոնային ռեժիմով: Աշխատանքային օրերի քանակը սեզոնում ընդունվում է 150օր՝ հաշվի առնելով Արաքս գետի վարարումները և ձմռան ցուրտ օրերը: Քանի որ օգտակար հաստաշերտը ունի համարյա հորիզոնական տեղադրում և կայուն հզորություն, հանքաշերտի բացումը կատարվելու է հանքային դաշտի հարավ-արևելյան մասից ընդլայնական կտրող խրամի անցումով:

Կտրող խրամի լայնությունը հիմքի մասում ընդունված է 8.0մ, միջին խորությունը՝ 1.3մ: Կողի թեքման անկյունը ընդունված է ոչ աշխատանքային 35°, աշխատանքայինը 40°: Կտրող խրամի երկարությունը կազմում է 44,0մ:

Կտրող խրամի անցումը կատարվելու է 1.0մ³ շերտփի տարողությամբ դրագլայնով սարքավորված ՅՕ-5111 EXL մակնիշի էքսկավատորով:

Հանքավայրի շահագործման ժամանակ ընդունված է ընդլայնական ընթացքաշերտով միակողմանի մշակման համակարգ:

Բացահանքի բնականոն աշխատանքն իրականացնելու համար նախատեսված են հետևյալ լեռնանախապատրաստական աշխատանքները՝ կտրող խրամի անցում ՀՀ 8-ՀՀ 7 ուղղությամբ, 44մ և բացահանքի տարածքում, օգտակար հաստաշերտի մակերևույթին տրանսպորտային սարքավորումների և էքսկավատորի շարժման ուղեծրով ՈՒՅՔ-մակնիշի փոխադրվող երկաթբետոնե տիպային սալիկների տեղադրում /2x1մ/ մինչև հանքավայրի հյուսիսային մասով անցնող մերձատար ճանապարհ-40մ, 40հատ՝ լեռնատրանսպորտային սարքավորումները բնահողի մեջ չխրվելու համար:

ԱԿԽ-ի արդյունահանման աշխատանքները կատարվելու են ներքևից շերտփման եղանակով, 1,0խմ շերտփի տարողությամբ դրագլայնով սարքավորված ՅՕ-5111 EXL մակնիշի էքսկավատորով, որով ավազակոպիճն անմիջապես հանքախորշից բարձվելու է սպառողի ավստոինքնաթիռի մեջ: ՅՕ-5111 EXL դրագլայնի շերտփման խորությունը էքսկավատորի ծայրային անցման դեպքում կազմում է 10,0մ, որը բավարարում է օգտակար հաստաշերտը մեկ աստիճանով մշակելու համար:



Նախատեսված է մեկ T-130 մակնիշի բուլդոզեր ընդհանուր հարթեցման և կոյտավորման աշխատանքներ իրականացնելու համար: Արաքս գետի հունը, գետի բնական եզրերը պահպանելու, «Մեծն Հովնան» ՍՊԸ ավազահանքի հատվածում գոյացած ջրաբերուկներից մաքրման աշխատանքների անվտանգությունն ապահովելու և ափապաշտպան կառուցվածքների կայունության հուսալիությունը ապահովելու նպատակով «Մեծն Հովնան» ՍՊԸ պատվերով «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ կողմից 2011թ-ից մշակվել է «Արաքս գետի ափապաշտպան կառուցվածքների» նախագիծ: Պահպանված է ափից նվազագույնը 10մ անվտանգության բերմա: Ըստ այդ նախագծի կատարվել են հետևյալ աշխատանքներ.

- սահմանային 12/1-12/2 նշանների հատվածում, աշխատատեղերում, ամրացվել են գետի ափի երկու հատված քարե լիցքով, յուրաքանչյուր հատվածի երկարությունը 10մ և կառուցվել է ուղղորդող մեկ 15մ երկարությամբ կարճապատնեշ՝ քարե լիցքով,
- սահմանային 13/2 նշանի հատվածում, աշխատատեղերում, ամրացվել է գետի ափի մեկ հատված՝ 10մ երկարությամբ քարե լիցքով,
- սահմանային 16 նշանի հատվածում, աշխատատեղերում, ամրացվել է գետի ափի երկու հատված քարե լիցքով, յուրաքանչյուր հատվածի երկարությունը 10մ,
- 16/4 նշանի հատվածում, աշխատատեղերում, ամրացվել է գետի ափի մեկ հատված 10մ երկարությամբ քարե լիցքով:

Խմելու և տեխնիկական նպատակների համար ջուրը բերվելու է ջրատար մեքենաներով Արաքսավան համայնքի ջրացանցից՝ պայմանագրային հիմունքներով:

Կենցաղային կեղտաջրերի համար կառուցվելու է բետոնապատ հոր, որտեղ հավաքվելու են կեղտաջրերը, որոնք պարբերաբար հատուկ մեքենաներով կտեղափոխվեն մոտակա կոյուղու համակարգ:

Հանքավայրի մոտակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Բացահանքի տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակներ չեն արձանագրվել, հանքավայրի շրջանում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն:

Ըստ նախագծային փաստաթղթերի նախատեսվում է շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները .:

- Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում, որին տրվում է համապատասխան թեքություն՝ թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը ապահովելու նպատակով:
- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:
- Փոշենստեցման նպատակով նախատեսվում է ճանապարհների ջրցանում տարվա չոր և շոգ օրերին:
- Մեքենաների աշխատանքի ժամանակ՝ սարքավորումների վրա վտանգավոր նյութերի չեզոքացուցիչների տեղադրում՝ վնասակար նյութերի արտանետումների քանակը



նվազեցնելու նպատակով: Մեխանիզմի աշխատանքի ժամանակ վառելիքի և քսայուղերի արտահոսքի վերահսկում և կանխում:

- Օգտագործվող ագրեգատների և սարքավորումների սարքին վիճակում աշխատեցում՝ վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու նպատակով:

- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն:

- Սոցիալական ազդեցություններին ուղղված միջոցառումներ:

- Խախտված տարածքի ռեկուլտիվացիա:

Տեղամասի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները:

- Մթնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ տարին երկու անգամ հաճախականությամբ:

- Արտադրական հրապարակի տարածքը նավթամթերքների աղտոտումից զերծ պահելու նպատակով տարին մեկ անգամ հողերի աղտոտվածության մշտադիտարկում:

- Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ:

- Գետի հունի մշտադիտարկումներ՝ տոպոհանույթային աշխատանքների միջոցով՝ ամիսը մեկ անգամ:

Մոնիթորինգի իրականացման համար նախատեսված է 240.0 հազար ՀՀ դրամ:

Բնապահպանական կառավարման պլանով նախատեսված են 840.0 հազ. դրամ ծախս, այդ թվում հանքավայրի փակման ծրագրի ծախսերը՝ 570.0 հազ.դր:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Օրենսդրությամբ սահմանված կարգով Արարատի մարզի Արաքսավան համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են բնապահպանության նախարարության ստորաբաժանումները: Առկա է «Արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» փորձաքննական դրական եզրակացությունը:

Համաձայն ՀՀ կառավարության 10.01.2008թ. «Հայաստանի Հանրապետության տարածքում Արաքս գետից գետավազի արդյունահանման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման 7-րդ կետի Արաքս գետում գտնվող ողողատային տիպի հանքավայրերից գետավազի արդյունահանման հետևանքով գետի հունի փոփոխությունը, հետևաբար նաև անդրսահմանային ազդեցությունը բացառելու նպատակով համապատասխան ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընդերքօգտագործողները յուրաքանչյուր ամիս տոպոհանութային աշխատանքների կատարման միջոցով պետք է իրականացնեն գետի հունի վիճակի ու կայունության մշտադիտարկումներ և արդյունքները ներկայացնեն Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների, Հայաստանի

Հանրապետության բնապահպանության նախարարություններ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսի 5-ը, ինչը <<Մեծն Հովնան>> ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել:

Փորձաքննական հիմնավորումներ

<<Մեծն Հովնան>> ՍՊԸ հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ 2006թ-ին տրամադրվել է դրական փորձաքննական եզրակացություն, որի հիման վրա հանքավայրը շահագործվել է, սակայն 2008թ. հունվարի 10-ի ՀՀ կառավարության N 18-Ն որոշման համաձայն մինչ օրս, տուպոհանութային աշխատանքների միջոցով գետի հունի վիճակի ու կայունության որևէ մշտադիտարկման արդյունք չի ներկայացվել բնապահպանության նախարարություն, ինչը կհիմնավորեր գետի հունի խախտման, ջրային ռեսուրսի հատակների, ափերի, հոսքի կամ հատկությունների փոփոխման բացառումը:

ՇՄԱԳ հաշվետվությունում բավարար հիմնավորումներ չեն ներկայացվել մինչև օրս գետի հունի խախտման, ջրային ռեսուրսի հատակների, ափերի, հոսքի կամ հատկությունների փոփոխման բացառման վերաբերյալ, ինչը պետք է հիմնված լիներ ընկերության կողմից գործունեության ընթացքում կատարված մշտադիտարկման արդյունքների վրա: Այսպիսով շրջակա միջավայրի վրա ազդեցությունների կանխորոշումը, գնահատումը, հնարավոր ռիսկերը, դրանց ազդեցության ծավալը, աստիճանը, առանց մշտադիտարկման արդյունքների հիմնավոր չէ, ուստի բավարար չէ նաև դրանց ազդեցության նվազեցման, կանխարգելման կամ վերացման հնարավորությունները, ուղիները, միջոցառումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Մեծն Հովնան>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արաքսավանի ավազի և կոպճի հանքավայրի Մեծն Հովնան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

Մասնագետ՝



Զ. Զուռնայան